



ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՀԱՅ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն № 6

ԵՊՀ-Ի ՀԱՅ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏՈՐՀՐԴԻ՝

2017 Թ. ՓԵՏՐՎԱՐԻ 8-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ՆԻՍՏԻ

Օրակարգում՝

1. Հեռակա ուսուցման մագիստրոսական թեզերի պաշտպանության արդյունքները և պետական քննական հանձնաժողովների նախագահների հաշվետվությունը:
2. 2016-17 ուստարվա 2-րդ կիսամյակի ուսումնական գործընթացի կազմակերպման հարցեր:
3. Ընդհանուր լեզվաբանության ամբիոնի տարեկան հաշվետվությունը:
4. Մարտին կայանալիք դպրոցականների ամենամյա օլիմպիադայի նախապատրաստական աշխատանքների ընթացքը ամբիոններում:
5. Ընթացիկ հարցեր:

Մկսելով գիտխորհրդի նիստը՝ հայ բանասիրության ֆակուլտետի դեկան պրոֆ. Ա. Ավագյանը իր խոսքի սկզբում տեղեկացրեց, որ գիտխորհրդի 26 անդամներից նիստին մասնակցում է 23-ը, և ապահովված է անհրաժեշտ քվորումը: Նա այնուհետև ծանոթացրեց օրակարգի հարցերին, որոնց քննարկումը միաձայն ընդունվեց բաց քվեարկությամբ:

1-ին հարցի՝ Երևանի պետական համալսարանի հայ բանասիրության ֆակուլտետի «Հայոց լեզու և գրականություն» մասնագիտության հեռակա ուսուցման մագիստրատուրայի 2016-2017 ուստարվա «Ժամանակակից հայոց լեզու և թարգմանչական գործ» և «Հայ գրականության պատմություն» մագիստրոսական ծրագրերի մագիստրոսական թեզերի

պաշտպանության արդյունքների առիթով պրոֆ. Ա. Ավագյանը ձայնը տվեց պետական քննական հանձնաժողով նախագահ Բ. Գ. Պ., պրոֆ. Վլադիմիր Կիրակոսյանին:

ՎԼԱԴԻՄԻՐ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ.

- 2016-2017 ուստարում մագիստրոսական թեզի պաշտպանությանը մասնակցել է «Ժամանակակից հայոց լեզու և թարգմանչական գործ» մագիստրոսական ծրագրի 5 ուսանող: Արդյունքները հետևյալն են՝

գերազանց- 2 ուսանող

լավ – 3 ուսանող:

«Ընդհանուր լեզվաբանություն» մագիստրոսական ծրագրից թեզի պաշտպանությանը մասնակցել է 1 ուսանող, որը ստացել է լավ գնահատական:

«Ջայ գրականության պատմություն» մագիստրոսական ծրագրից մագիստրոսական թեզի պաշտպանությանը մասնակցել է 4 ուսանող: Արդյունքները հետևյալն են՝

գերազանց – 2 ուսանող

լավ – 2 ուսանող:

Պետք է նշել, որ մագիստրատուրայի շրջանավարտների գիտելիքները բավականին բարձր էին: Նրանք տիրապետում էին մագիստրոսական աշխատանքների նյութին, մասնագիտական գիտելիքները համապատասխանում էին պահանջվող մակարդակին, իսկ որոշ ուսանողներ աչքի ընկան նյութի խոր իմացությամբ՝ զգալիորեն գերազանցելով պահանջվող մակարդակը: Հարկ է նշել նաև, որ մագիստրոսական աշխատանքների թեմաներն առավելապես արդիական էին, անդրադառնում էին հայագիտության մեջ վիճահարույց խնդիրների. այդ իրողությունն է՝ լ առավել հետաքրքիր դարձրեց մագիստրոսական աշխատանքների պաշտպանությունը՝ երբեմն վերածելով այն բանավեճի: Աշխատանքների գերակշիռ մասը կառուցված էր նյութի տեսական մասի և գործնական հետազոտությունների համադրմամբ, դրանց մի մասում առկա էին փորձարարական հստակ տվյալներ և այդ տվյալներից ելնելով՝ կատարված էին անհրաժեշտ եզրակացություններ: Թեզերի թեմաներն ունեին անհրաժեշտ գիտագործնական ուղղվածություն, գիտական և ճանաչողական որոշակի արժեք: Կային նաև զուգադրական բնույթի աշխատանքներ: Ինչպես բովանդակությամբ, այնպես էլ կառուցվածքային ու կատարողական առումով մագիստրոսական թեզերը համապատասխանում էին նման աշխատանքներին ներկայացվող պահանջներին:

Դրանցում հստակ նշված էին նպատակը, խնդիրները և ակնկալվող արդյունքները, հիմնավորված էր արդիականությունը, ուսումնասիրված էր համապատասխան գրականություն, և ներկայացված էին հետազոտության գործնական արդյունքները:

Ուսանողները կարողացան խոսքի տրամաբանական կառուցվածքով, լեզվական իրազեկություններով, թեմայի և աշխատանքի վերաբերյալ հարցերին տրվող պատասխանների և պարզաբանումների, բանավիճելու և փաստարկներ բերելու կարողություններով արժանանալ համապատասխան գնահատականների: Այնուհանդերձ, կային նաև սակավաթիվ աշխատանքներ, որոնցում մասնակիորեն էր կատարված թեմային առնչվող գրականության վերլուծություն, հիմնավորված չէին սեփական մտեցումները ուսումնասիրվող խնդրի վերաբերյալ, թեմաների ձևակերպումները երբեմն շատ ավելի ընդհանրական բնույթ էին կրում, քան դրանցում կատարված աշխատանքն էր:

Ուսանողների պատրաստվածության բարձր մակարդակը, մասնագիտական իրազեկությունը, հետազոտական մեթոդների կիրառումը, փաստական նյութը դասակարգելու, վերլուծելու, գնահատելու կարողությունը վկայում են ուսանողների հետ համապատասխան ամբիոնների կատարած հանգամանալից և երկարատև աշխատանքի մասին:

Օրակարգի 2-րդ հարցը նվիրված էր 2016-17 ուստարվա 2-րդ կիսամյակի ուսումնական գործընթացի կազմակերպմանը: Ֆակուլտետի դեկանը, ընդհանուր առմամբ գոհ լինելով 1-ին կիսամյակի արդյունքներից, նկատեց, որ շատ ավելի պատասխանատու շրջան է 2-րդ կիսամյակը, որն ըստ էության հաշվետու տարվա ծանրության կենտրոնն է՝ տարեվերջյան ամփոփիչ և պետական քննություններ, ավարտական աշխատանքների ու թեզերի պաշտպանություններ և այլն, ասել է թե՛ պետք է է՛լ ավելի կենտրոնացնել ուժն ու եռանդը՝ առաջադիմության բարձր մակարդակ ապահովելու համար:

Օրակարգի 3-րդ՝ ընդհանուր լեզվաբանության ամբիոնի 2015-2016 ուստարվա հաշվետվության առիթով ելույթ ունեցավ ամբիոնի վարիչ Բ. Գ. Թ., դոցենտ Վարդան Պետրոսյանը:

ՎԱՐՎԱՆ ՊԵՏՐՈՍՅԱՆ.

- 2015-2016 ուստարում ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմը դասավանդումը զուգակցել է ուսումնամեթոդական և գիտահետազոտական աշխատանքի հետ: Ամ-

բիռնի գիտական հետաքրքրությունների շրջանակում են եղել լեզվաբանության տեսության, կառուցվածքային լեզվաբանության, համակարգչային լեզվաբանության, լեզվաբանական նշանագիտության, հայերենի պատմահամեմատական ուսումնասիրության, հ.-ե. լեզուների համեմատական քերականության, դասական լեզուների դասավանդման հետ կապված բազմաթիվ հիմնահարցեր:

Հաշվետու շրջանում ընդհանուր լեզվաբանության ամբիոնի դասախոսները՝

1) գիտական տարբեր հանդեսներում և գիտաժողովների զեկուցումների ժողովածուներում հրատարակել են **27** (քսանյոթ) հոդված (Վ. Պետրոսյան՝ 6, Լ. Հովսեփյան՝ 2, Ա. Աբրահամյան՝ 8, Ս. Ավետյան՝ 5, Գ. Մկրտչյան՝ 6):

2) մասնակցել են միջազգային և հանրապետական գիտաժողովների՝ ներկայացնելով **7** (յոթ) զեկուցում (Վ. Պետրոսյան՝ 1, Լ. Հովսեփյան՝ 1, Ա. Աբրահամյան՝ 2, Ս. Ավետյան՝ 1, Գ. Մկրտչյան՝ 3):

3) հրատարակել են **1** մենագրություն (Լ. **Հովսեփյան**, Գրաբարի բառակազմության վերլուծական տիպը, Ե., 2016) և **1** ուսումնամեթոդական ձեռնարկ (Ն. **Մկրտչյան**, Ա. **Հայրապետյան**, Լատիներենի ձեռնարկ, Ե., 2016 թ.)

Ամբիոնի նախաձեռնությամբ և Վ. Պետրոսյանի առաջաբանով վերահրատարակվել է ակադ. Գ. Բ. Ջահուկյանի «Լեզվաբանության պատմություն» մեծարժեք մենագրությունը:

Ընթացքի մեջ են անվանի գիտնական, ակադեմիկոս Գ. Ա. Ղափանցյանի ծննդյան 130-ամյակին նվիրված հանրապետական գիտաժողովի աշխատանքները, որը տեղի կունենա ս. թ. փետրվարի 28-ին:

Ամբիոնը ունի 2 հեռակա ասպիրանտ և 1 հայցորդ:

Ամբիոնի դասախոսները տարբեր դասընթացներ են վարում (լեզվաբանության հիմունքներ, ընդհանուր լեզվաբանություն, համեմատական քերականություն, հ.-ե. լեզուների համեմատական քերականություն, լատիներեն, հին հունարեն, լեզվաբանական տիպաբանություն, իմաստաբանական արդի ուսմունքներ և այլն) ԵՊՀ 6 ֆակուլտետների բակալավրիատում և մագիստրատուրայում (հայ բանասիրության, ռ/գ բանասիրության, արևելագիտության, աստվածաբանության, քիմիայի և կենսաբանության), ինչպես նաև ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում (Գ. Մկրտչյան): Ըստ ուսանողական սոցիալական տվյալների՝ ամբիոնի

դասախոսական կազմի միջին գնահատականը 4 միավորից բարձր է: Ինչպես երևում է նաև տպագրված աշխատանքների ցանկից, ամբիոնի դասախոսների մի մասը, մանկավարժական աշխատանքին զուգահեռ, արդյունավետ կերպով զբաղվում է նաև գիտությամբ:

Օրակարգի 4-րդ հարցի առիթով (մարտին կայանալիք դպրոցականների ամենամյա օլիմպիադայի նախապատրաստական աշխատանքների ընթացքը ամբիոններում) ելույթ ունեցան համապատասխան ամբիոնների վարիչները՝ պրոֆ. պրոֆ. Յու. Ավետիսյանը, Ս. Մուրադյանը և Ա. Աբաջյանը: Նրանք հավաստիացրին, որ շարունակում են հարցաշարերի կազմման աշխատանքները, և մարտին պատրաստ կլինեն պատշաճորեն կազմակերպելու հանրապետական օլիմպիադան:

Ընթացիկ հարցերում քննարկվեցին.

ա/ **ԼՄԵՑԻՆ** - Մանկավարժության ամբիոնի ասպիրանտ /հեռակա/ Ստելլա Շաքյանի թեկնածուական ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Պրոֆ. պրոֆ. Ա. Ավագյանը, Ն. Հարությունյանը և դոցենտ Գ. Բաբայանը:

ՈՐՈՇԵՑԻՆ – 1. Մանկավարժության ամբիոնի ասպիրանտ Ստելլա Շաքյանի թեկնածուական ատենախոսության թեման հաստատել հետևյալ ձևակերպմամբ՝ «Հայաստանի և Ֆինլանդիայի կրթության համակարգերի կառավարման համեմատական վերլուծություն» /ԺԳ. 00. 01-«Մանկավարժության տեսություն և պատմություն»/:

2. Գիտական ղեկավար նշանակել մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ն. Հարությունյանին:

բ/ **ԼՄԵՑԻՆ**– 2016-17 ուստարվա 1-ին կիսամյակի արդյունքների հիման վրա ուսանողներին անվանական կրթաթոշակ տրամադրելու հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- Պրոֆ. պրոֆ. Ա. Ավագյանը, Ս. Մուրադյանը, Յու. Ավետիսյան, Վ. Սաֆարյանը, Ալ. Մակարյանը:

Նշվեց, որ հայ բանասիրության ֆակուլտետի անվանական կրթաթոշակ ստացող ուսանողները 2016-17 ուստարվա 1-ին կիսամյակի քննաշրջանի ամփոփումից հետո պահպանել են իրենց գերազանց առաջադիմությունը և 2016-17

ուստարվա 2-րդ կիսամյակում հավակնում են պահպանել իրենց ստացած անվանական կրթաթոշակները.

ՈՐՈՇԵՑԻՒՆ.- Պահպանել հետևյալ ուսանողներին հատկացվող անվանական կրթաթոշակները.

1. Բագրատյան Քրիստինե Բագրատի /բակ. IV կուրս/- Ս. Մաշտոցի անվան
2. Լնոյան Արմեն Վարդանի /բակ. IV կուրս/ - ԵՊՀ-ի անվան
3. Սարգսյան Տիգրանուհի Էդվարդի /բակ. IV կուրս/ - Ստ. Ալաջաջյանի անվան
4. Բոցինյան Մարիանա Սամվելի /բակ. IV կուրս/ - Գր. Նարեկացու անվան
5. Մկրտչյան Սուսաննա Արմենի /բակ. IV կուրս/ - Խ. Աբովյանի անվան

զ/ **ԼՍԵՑԻՒՆ.**- Բան. գիտ. թեկն., դոցենտ, հայ նորագույն գրականության ամբիոնի վարիչ Մեյրան Գրիգորյանի՝ ասպիրանտ ղեկավարելու երաշխավորության հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՒՆ. – Պրոֆ. պրոֆ. Վ. Գաբրիելյանը, Ա. Ավագյանը, Ալ. Մակարյանը:

Նշվեց, որ Ս. Գրիգորյանը հեղինակ է նորագույն շրջանի հայ գրականությանը վերաբերող բազմաթիվ հոդվածների, մենագրությունների («Ժամանակակից խորհրդահայ պոեմը (1960 – 80-ական թթ.)», «Պսակազերծում. Եղիշե Չարենց «Նորահայտ էջեր» գիրքը», «Պարույր Սևակ. Արձագանքող անտառը», «Բանասիրություն և բանավեճ», «Չարենցի բնագիրը») և մեթոդական հոդվածների («Թումանյանական մոտիվները «Անլռելի զանգակատուն» պոեմում», ««Մթնաձորը» քննադատության գնահատմամբ»):

Նախորդ տարիներին Ս. Գրիգորյանը ղեկավարել է երեք ասպիրանտի, ովքեր հաջողությամբ պաշտպանել են թեկնածուական ատենախոսությունը:

ՈՐՈՇԵՑԻՒՆ. – Միջնորդել ԲՈՀ-ին՝ Ս. Գրիգորյանին տալու ասպիրանտ ղեկավարելու թույլտվություն:

դ/ **ԼՍԵՑԻՒՆ.**- Հայ նորագույն գրականության ամբիոնի հեռակա ուսուցման առաջին տարվա ասպիրանտ Թագուհի Ղազարյանի ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. –Պրոֆ. պրոֆ. Վ. Գաբրիելյանը, Ա. Ավագյանը, Բ. Գ. Թ., դոցենտ Ս. Գրիգորյանը:

Ատենախոսության թեմա առաջարկվեց «Եղիշե Չարենցի «Երկիր Նաիրի» վեպի ստեղծագործական պատմությունը և գործառնությունը»:

ՈՐՈՇԵՑԻՆ. - Հաստատել.

1. Թագուհի Ղազարյանի ատենախոսության թեման՝ «Եղիշե Չարենցի «Երկիր Նաիրի» վեպի ստեղծագործական պատմությունը և գործառնությունը»՝ ժ.01.02 - «Նորագույն շրջանի հայ գրականություն» մասնագիտությամբ:
2. Գիտական ղեկավար՝ Բան. գիտ. թեկն., դոցենտ Սեյրան Գրիգորյանին:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

ՊՐՈՖ. Ա. ԱՎԱԳՅԱՆ

ԳԻՏՔԱՐՏՈՒՂԱՐ

ՊՐՈՖ. ԱԼ. ՄԱԿԱՐՅԱՆ